

IMRE MADÀCH

ՄԱՐԴՈՒՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆԸ

(Շար. տե'ս «Բազմավեպ» 1967, ք. 1-2, էջ 28)

ՏԵՍԻԼ Դ.

Եզիպտոսի մէջ: Դէպի առջեւ բացուող դահլիճ մը. Ադամ՝ երիտա-
սարդ, իբր Փարաւոն՝ նստած է գահին վրայ. Արուսեակ՝ իր նախարարը.
Բիչ մը աւելի ետեւօք՝ նոյն շքախոսք մը: Խորը՝ ստրուկներ բուրգ մը կա-
ռուցանելու կ'աշխատին, խարազանաւոր գործավարներու հսկողութեան տակ:
Պայծառ արեւ:

ԱՐՈՒՍԵԱԿ

Մարդիկըդ որ երջանիկ են քեզ համար
Արիւնին տալ, կը հարցընեն անձկազին,
Ի՞նչ է արդեօք որ մեծաշուք Փարաւոնն
Իր գահին վրայ անդամ հանդէլ չի թողուր:
Ինչո՞ւ օրուան հաճոյքները կը դռնէս,
Եւ զիշերուն անուրջներու տեսքն անոյշ,
Ու չես թողուր հողը մեծղի ծրարիդ՝
Ըստրուկներուդ, որոնց պարտքն է անիկա,
Քանի որ այս աշխարհի վրայ ընդարձակ
Իշխանութիւն եւ ամէն փառք քուկդ են լոկ,
Եւ հաճոյքներ՝ զոր կրնայ մարդ մ'ըմբռնել:
Հարիւր հարուստ նահանգներու տէրն ես դու,
Քեզի միայն բուրեան ծաղիկ կը բացուի,
Եւ քեզ համար կը հասունցեն անոյշ միւրդ:
Քեզի համար կը հառաչեն կիներ բիւր.
Խարտեաշ աղջիկն՝ իր աչքերով նրւադիտ,
Փափուկ, քրնքուշ, տեսիլ մը դերդ խարուսիկ.
Աղջիկը թուի՝ շրթունքներով իր հեւուն,
Բերերուն մէջ վառ խօլական կիրքերով,
Քուկդ են: Իրենց ճակատադիրն է քրմայքդ.
Ամէնք կը զգան թէ պարտքերն են ըրած՝
Երբ կարենան վայրկեաններուդ տալ համեմ:

Ա.Դ.ԱՄ

Այս ամէն բան իմ սիրտը չի հրապուրեր,
Բռնի տուրք են, անոնց համար չեմ կռուած,
Եւ չեմ կրնար զանոնք ինծի վերադրել:
Ահա՛, սակայն իմ կերտելիք այս դործով՝
Ուղիղ ճամբան զբտած ըլլալ կը կարծեմ,
Որ կը տանի զիս իրական մեծութեան:
Բընութիւնն իսկ անոր վըրայ կը դմայլի,
Տասնեակ դարեր պիտի անունս հռչակէ:
Ո՛չ ժաժ պիտի տապալէ զայն, ո՛չ աղէտ.
Մարդը դարձաւ հըղօրապէս քան Աստուած:

ԱՐՈՒՍԵԱԿ

Ո՛հ, Փարաւոն, քեզ երջանիկ կը զգաս դուն
Այդ կարծելով. օ՛ն, ձեռքըդ զիւր սրտիդ վըրայ

Ա.Դ.ԱՄ

Ո՛հ, այլ կը զգամ ունայնութիւն մ'անսահման:
Հող չէ՛. ոչ թէ երջանկութիւն փնտռեցի,
Այլ՝ փառք, եւ այս ահա առջեւ է բացուած:
Միայն խուժանն տառապանքն իմ չիմանայ. —
Թէ կարեկցի՝ չ'երկրպագեր ալ ինծի:

ԱՐՈՒՍԵԱԿ

Բայց օր մը երբ ըմբռնես թէ փառքն է սին,
Թէ խաղ մ'է լոկ լոպէտիան ցընորքի...

Ա.Դ.ԱՄ

Կարելի չէ՛:

ԱՐՈՒՍԵԱԿ

Բայց ենթադրենք:

Ա.Դ.ԱՄ

Կը մեռնի՞մ,
Անիծելով աշխարհն ամբողջ ինծմէ՛ հաբ:

ԱՐՈՒՍԵԱԿ

Պիտ' չմեռնիս, օր մը թէ եւ հասկընաս,
Պիտի սկըսիս ծայրէն նախկին աւիւնովդ:

(Աշխատաւորներէն մէկը, սաստիկ ծեծուած գործավարներէն եւ անոնցմէ
հալածուած, աղաղակելով կը վազէ ներս եւ դահլիճ մտնելով՝ գահին առջեւ
կը գլորի):

ՍՏՐՈՒԿ

Տէ՛ր իմ, օղնէ՛:
(Աշխատաւորներու մէջէն՝ Եւա, իբր ստրուկին կիմը, առաջ կու գայ, եւ
ցաւագին նիչով իր ամուսնին վրայ կը հակի):

Ե Ի Ա

Անոր ի զուր կ'աղաչես:
Ո՛վ մասնակից քու ցաւերուդ չէ եղած,
Զի հասկընար: — Շատ մեղմ է ճի՛շը ցաւին,
Ու բարձր է դահն: Ինչո՞ւ դու զիս չես կանչեր,
Որ քեզ ծածկեմ ու մարմնիս վրայ ընդունիմ
Քու հարուածներդ:

ԱԴԱՄ

(Ներս խուժող գործավարներուն, որոնք ստրուկն ու կիմը դուրս կ'ուզեն
քաշել):

Հո՛ն թողուցէք: Դո՛ւրս ասկից:

(Գործավարները կ'իյլեն):

Ի՞նչ անծանօթ ըզգացում սիրտս կը պատէ,
Ո՞վ է այս կիմն ու ի՞նչ համայք ունի սա,
Որ Փարաւոնն իրեն կարծես չըզթայած՝
Փռչեթաւալ իր խեղճ անձին կը ձրգէ: (Ոտքի կ'իյլէ):

ԱՐՈՒՍԵԱԿ

Մէկն է դարձեալ այն թելերէն ասիկա՝
Որով պատած է տէրըդ քեզ հեղնելու,
Յիշել տալու քեզի թէ լոկ որդ մըն ես,
Մինչ զերդ թիթեռ կը թեւածես յաւակնոտ:
Այս նուրբ թելին փուն կը ճանչնաս զօրութիւնն,
Ու փրցընել ես չեմ կարող զանիկա՝
Զի մատներէս կը խուսափի:

ԱԴԱՄ

(Իջնելով գահին աստիճաններէն):

Եւ թո՛ղ զայն:

Որքան սեղմէ՝ այնքան է ինձ հաճելի:

ԱՐՈՒՍԵԱԿ

Բայց պատշաճ չէ որ թաղաւոր մ'իմաստուն՝
Հեծէ անոր շղթային տակ:

ԱԴԱՄ

Ի՞նչ ընեմ:

ԱՐՈՒՍԵԱԿ (հեղանգով)

Ուրիշ ճամբայ չըկայ. ծածուկ այդ թելին
Գոյութիւնն իսկ պէտք է մերժէ դիտութիւնն՝
Ու թող քրքջայ նիւթը եւ ոյժն անոպայ:

ԱԴԱՄ

Ես չեմ կրնար ոչ քրքրջալ, ոչ մերժել:

Ե Ի Ա

Ա՛խ, սիրելիս, արեւնդ առատ կը հոսի:
Կը կեցընեմ. շա՛տ կը ցաւի, այնպէս չէ՞:

ՍՏՐՈՒԿ

Կեանքն է ցաւող. բայց ալ երկար չի տեւեր:

Ե Ի Ա

Ո՛չ, ո՛չ. ինչո՞ւ, մինչեւ ցարդ զո՞ւր ասրեցար,
Եւ մեռնիս այժմ՝ երբ հաղիւ զիս գրտած ես:

ՍՏՐՈՒԿ

Ըստրուկն ինչո՞ւ ասրի. — որ կրէ հըզօրին
Բուրդերուն քար, ու յաջորդներ ձրգելով
Անոր լուծին տակը դաժան, չըքանայ:
Մէկուն փոխան... մէկուն փոխան՝ միլիոններ:

ԱԴԱՄ

Ա՛խ, Արուսեակ, ի՞նչ սոսկալի խօսք է աս:

ԱՐՈՒՍԵԱԿ

Հոգեվարքին զառանցանքն է լոկ տենդոտ:

ԱԴԱՄ

Եւ ի՞նչ ըսաւ:

ԱՐՈՒՍԵԱԿ

Մեծ Փարաւոն, դուն ինչո՞ւ
Կը տանջըւիս: Մեծ բա՞ն մըն է պատահած.
Երկրիս վրայէն ստրուկ մը միայն պակսեցաւ:

Ե Ի Ա

Ոչի՛նչ է քեզ, բայց ինձ համար՝ ամէն բան,
Վա՛յ ինձ, ո՞վ զիս պիտի սիրէ ասկէ ետք:

ՍՏՐՈՒԿ

Ես այլևս ոչ: — Մոռցի՛ր զիս, կի՛ն, յաւիտեա՛ն: (Կը մեռնի):

Ա.ԴԱՄ

Ես պիտի քեզ սիրեմ: Տարէ՛ք այս զիակն:

(Դիակը կը վերցնեն):

Ելի՛ր, ո՛վ կին, տեղըդ դահլին վըրայ է.
Գեղեցկութեան դուն այնքան տէր ես, ինչքան
Զօրութեան՝ ես, պէտք է ինք մենք վերջապէս
Իրար դռնել:

Ե Ի Ա

Մե՛ծ Փարաւոն, ո՛հ, զիտեմ,
Քու հրամանդ է ճակատադիրը ուսկին,
Չեմ գիտազրեր, քիչ մը միայն ժամանակ
Թո՛ղ ինձ, ինչդե՛մ, ուղածդ ապա հրամայէ:

Ա.ԴԱՄ

Այլ մի՛ այլ բան: Իշխանութիւնս, ո՛հ, երբեք
Պիտի չանցնի հրամանի ցուրտ սահմանէն:

Ե Ի Ա

Գո՛հ եղիր դու, որ ներկայիս հրամանն այս
Յաւ չի տար ինձ: — Մի՛ նախանձիր արցունքիս,
Զոր մեռելին վըրայ հիմա կը թափեմ: —
Ի՛նչ վեհ մեռել, ի՛նչ վրեժ է, ո՛վ Աստուած:

(Մեռելին վրայ կ'իյնայ):

Ա.ԴԱՄ

Վրե՛մ մեռե՛լ. հակադրութի՛ւն ինչպիսի.
Հեղնանք մըն է մեր ճիգերուն այս անդորը,
Կամ կարեկից ժրպիտ մը մեր փրքանքին:

ԱՐՈՒՍԵԱԿ

Փախըտտական ըստրուկ մը դէմդ խիզախող
Կ'ըսէ ահա. չղթաներէդ ուժով եմ:

Ա.ԴԱՄ

Հանգուցեալին անդո՛րը, ողջին փրկութի՛ւն:
Արտասուքդ ան ա՛լ չի տեսներ. ցաւ է ինձ
Քու ժրպիտէդ զրկուիլ:

(Մեռելը դուրս կը տանին: Ադամ գահ կ'առաջնորդէ Եւան):

Ո՛վ կին, նստէ քովս:

Ի՛նչ հեշտանք է հանդըստանալ կուրծքիդ վրայ:

(Վայնասուն մը կը բարձրանայ աշխատանքներու մէջ: Եւս կը ցնցուի):

Ո՛հ, սիրելիս, ի՞նչ ունիս դու:

Ե Ի Ա

Չե՞ս լըսեր

Ռամիկին ճիչն:

Ա.ԴԱՄ

Առջի անգամ կ'իմանամ:

Ուշ մի՛ դըներ: Անոյ՛լ երբ է՛, արդարեւ:

Համբուրէ՛ զիս, եւ ալ մոռցի՛ր ողջ աշխարհն: (Արուսեակին)
Իսկ դու գընա՛, վաճառուին այդ լըսեցուր:

ԱՐՈՒՍԵԱԿ

Ես չեմ կրնար, իրաւունքն է ուսկին,
Իր լուծին հետ միասին է ժառանգած:

(Նորէն վայնասուն: Եւս կը ճշայ. Ադամ կը կանգնի):

Ա.ԴԱՄ

Կի՛ն, կը տանջուիս, եւ չեմ զիտեր թէ ի՛նչպէս
Օգնեմ քեզի: Եւ քու սրտիդ ընդմէջէն՝
Ճիչը դերդ շանթ կը թաւալի զլիւսւս վրայ,
Կարծես աշխարհ աղաղակէր. օգնութի՛ւն...:

Ե Ի Ա

Ո՛հ, Փարաւոն, ջախջախէ՛ զիս, բայց ներէ՛
Որ խուժանին ճիչն ինձ հանդէլ չի թողուր:
Կը հասկընամ, թէ աղախինդ եմ եւ լուկ,
Զըւարճացընել քեզ է կեանքիս նըպատակ.
Պիտի մոռնամ ես ամէն բան իմ չորս դին.
Մեռե՛լն, անո՛ւրջս, աղքատութի՛ւն, մեծութի՛ւն,
Որ ժրպիտն իմ դառնայ հաճոյք, շրթներս՝ հուր.
Բայց երբ ամբոխն, բիւրարազուկ այս էակ,
Խաբաղանուած թրկունքներով հո՛ն ճըչայ,
Ինչպէս չնչին մաս մը մարմնի ցաւատանջ,
Ժողովուրդէն ես անջատուած աղջիկ, ես,
Յաւն այդ բոլոր՝ խորը սրտիս մէջ կը զգամ:

Ա.ԴԱՄ

Ես ալ քեզ հետ: — Մէկուն փոխան միլիոններ —
Ինչպէս ըսաւ նաեւ մեռնողն:

Ե Ի Ա

Փարաւոն,
Դուն տխրեցար, ու պատճառն ալ լոկ ես եմ.
Վըտարէ՛ դիւ, կամ սորվեցուր թէ ի՛նչպէս
Ես խուլ դառնամ:

Ա.Դ.Ա.Մ

Դուն ինծմէ լաւ կը թիւ մ'ես,
Որովհետեւ սորվեցուցիր լըսել ճիշն:
Ա՛լ չըլըսեմ: — Եւ ըստրուկներն ըլլան թող
Ազատ, ահա՛: Ի՞նչ կ'արժէ փառքն, որ մէկ անձ
Կը ստանայ լոկ միլիոններու կորուստով,
Ու ճիշերով թշուառներու բիւրաւոր,
Որոնց մէջն ալ նոյն մարդն է որ կը չնչէ:
Կը զգամ հաճոյքն անգամ մը լոկ, ցաւը՝ բիւր:

Ա.Ր.ՈՒՍԵԱԿ

Ա՛հ, Փարաւոն, կը դառանցե՛ս, մինչ խուժանն
Ճակատադրէն դատապարտուած դրաստ մըն է,
Որ կը դարձնէ ջաղացքն ամէն վարչութեան.
Անոր համար ըստեղծուած է: Ազատէ՛.
Ինչ որ մէկդի նետես դուն, ինք չի ստանար,
Պիտի փնտռէ վաղը նոր տէր մ'ինքն իրեն:
Կամ կը կարծես նստեցնէ զլիսուն վրայ՝
Եթէ չըզար անհրաժեշտ հարկն իշխանի,
Կամ բընակէր զխտակցութիւն կուրծքին տակ:

Ա.Դ.Ա.Մ

Եւ կը ճըչայ, ինչո՞ւ, կարծես թէ տանջէր
Ըստրկութիւնն:

Ա.Ր.ՈՒՍԵԱԿ

Թէեւ անդէտ, կը տանջուի,
Զի ամէն մարդ իշխանութեան կը ցանկայ:
Այս է զգացումն, եղբայրութիւն չէ երբեք,
Որ կը մղէ ազատութեան դրօշին տակ
Ամբոխը մեծ: — Գիտակցութիւնն չի դառնար
Իր զլիսուն մէջ, ալ լոկ նըման բնադդի՛.
Կը մղէ զինք դէպ ամէն բան՝ որ է նոր,
Եւ մերժելու ինչ որ արդէն եղած է.
Եւ անոր մէջ կ'ըզձայ տեսնել մարմնացած
Երջանկութեան մասին հիւսած երազներն:
Խոր ծով մըն է ամբոխն, ու չոզն արփենի
Զի թափանցեր իր խաւերէն, մութ կը մնայ.
Մակերեսին ալիքը լոկ կը փալիլի.
Եւ դուցէ այդ փոքրիկ ալեակն ես դու ինքդ:

Ա.Դ.Ա.Մ

Ինչո՞ւ ճիշտ ես:

Ա.Ր.ՈՒՍԵԱԿ

Կամ ուրիշ մէկ, նըման քեզ,
Որ զխտակից ժողովուրդի բընադդին,
Կը յանդգնի փայլուն տեղիդ տիրանալ,
Ազատութեան վեհ հերոսի անունով:
Սակայն ամբոխն ամենեւին չ'օգտուիր,
Կը մընայ միշտ տէր մը՝ փոխուած անունով:

Ա.Դ.Ա.Մ

Տրամաբանուող ո՛րքան անել բաւի մ'է,
Կը թըւի թէ ելքի ճամբայ իսկ չըկայ:

Ա.Ր.ՈՒՍԵԱԿ

Ճամբայ մը կայ: Տո՛ւր մատանի եւ շղթայ
Այդ մէկ քանի անհատներուն փառամով,
Եւ դեռ ուրիշ խաղալիկներ, եւ ըսէ.
«Ահա ես ձեզ ամբոխէն վեր կը հանեմ,
Եւ դուք ասով ազնւագոյն կը դառնաք»: —
Ու հեղինկով պիտի խոստան հաւատայ,
Յանձն առնելով արհամարհուիլ քեզմէ ալ:

Ա.Դ.Ա.Մ

Մի՛ փորձեր զիս այդ հրապուրիչ խօսքերով:
Զըլլան ստրուկներ. ամէնքն ըլլան թող ազատ:
Հրատարակէ՛ անոնց շուտով, օ՛ն, փութա՛,
Որ ուշ ըլլայ՝ եթէ յանկարծ ես զըջամ:

Ա.Ր.ՈՒՍԵԱԿ (մեկուսի)

Յառա՛ջ ճամբէդ, ինքնահաւան ու կարծէ
Թէ կը քալես, մինչ բախտը քե՛զ կը վարէ: (Դուրս):

Ա.Դ.Ա.Մ

Թող անաւարտ այստեղ մընայ կերտուածքն այս,
Զերդ փըլատակ աղլարարող ամէնուն
Որ կը ձգտին իրենց չափէն աւելի.
Մեծ հարցական մեր խեղճութեան եւ ոյժին:

(Դուրսէն ուրախութեամբ աղաղակներ կը լսուին, աշխատաւորները կը ցրուին:
Արուսեակ կը վերադառնայ):

Հրճուէ՛, խուժան, որ մեծութիւնն քու առաջ
Խոնարհեցաւ: Բայց մի՛ կարծեր թէ բռնի:

Ե Ի Ա.

Մըխիթարուէ՛, ո՛ր վ սիրելիս, մի՛ տրամիր,
Արդէն դաժան այդ փառքը ցուրտ լի՞նչ կ'արժէ,
Որ կը սողայ պաղ օձի պէս մեր միջեւ:

Ա.Դ.Ա.Մ

Բայց մեծ է, մեծ:

Ե Ի Ա.

Հեռու մեղմէ: Ճիշդ, տե՛ս,
Լրուեց, ու մեր երջանկութիւնն չի խռովեր.
Ի՞նչ տենչ ունիս՝ երբ կուրծքիս վրայ կը հանդէս:

Ա.Դ.Ա.Մ

Ո՛հ կին, ի՛նչ նեղ, ի՛նչ անձուկ է հորիզոնդ:
Ու ճիշտ ասով այրը խրոխտ կ'առնէքնես.
Ոյժը կրնայ տկարութիւն լոկ սիրել.
Ինչպէս ծընող մը խնամոտ՝ իր դաւիին
Տխեղծութիւնը կը խնամէ խանդակաթ:

Ե Ի Ա.

Ա՛խ, փարաւոն, ձանձրոյթ կու տամ դուցէ քեզ,
Այս անօղուտ շաղկապութեամբս անխնայ:
Ափսո՛ս, բայց ես չունիմ հանճար աւելի:

Ա.Դ.Ա.Մ

Մի՛ ալ ուղեր դուն ունենալ, անուշի՛կ:
Բաւական խելք ունիմ ինքս ալ, չեմ հակիր
Կուրծքիդ վրայ՝ ոյժ, մեծութիւն փնտռելու,
Ո՛չ գիտութեան համար, որոնք ես կրնամ
Մատենաներու մէջ պրպրտել դիւրագոյն:
Բայց դուն խօսէ՛, խօսէ՛, ձայնի՛կըդ լըսեմ,
Թրթրացումն անոր թող սիրտս ողողէ:
Ի՛նչ ալ լսես, ինծի համար նոյն բանն է.
Կը հարցնե՞նք թռչնիկին թէ ի՛նչ կ'երգէ,
Բայց հաճոյքով անոր ձայնին կ'ունկնդրենք:
Եղի՛ր ծաղիկ, սիրուն, անպէտ խաղալիկ,
Բայց զեղեցիկ, իր արժէքն է անոր մէջ: (Արուսեակիմ)
Տենչ մը, սակայն, երջանկութիւնս կը խռովէ.
Իդձ մը, դուցէ՛ յիմար, — բայց, ո՛հ, կատարէ՛, —
Յանդուզն ակնարկ մը թող ինծի որ նետեմ.
Քանի մ'հազար տարիներ ետք՝ համբաւէս
Ի՞նչ պիտի մնայ:

ԱՐՈՒՍԵԱԿ

Կը համբուրուիք մինչ դուք հոս,
Շոյանքն անոյշ զեփիւռին դուն չե՞ս ըզբար,
Որ քու այտերդ զըզուելէ ետք՝ կը փախչի:
Անցած տեղն իր կ'իջնէ փոշին մանրամաղ,
Մէկ տարուան մէջ՝ քանի մը դիժ հաստութեամբ,
Քանի մը դիզ կը բարձրանայ՝ մէկ դարէն.
Քանի մ'հազար ամէն բուրդերդ կը ծածկէ,
Եւ կը թաղէ աւազի տակ քու համբաւդ.
Շընադայլեր բուրաստանիդ մէջ կ'ոռնան,
Անապատին մէջ ժողովուրդ մը դերի
Եւ մուրացկան վըրաններն իր կը զարնէ:

(Ինչ որ Արուսեակ կ'ըսէ՝ տեսանելի կը դառնան)

Եւ այս բոլորն՝ ո՛չ թէ մըրիկ մ'երկրադուրդ
Կը կատարէ, ո՛չ որոտուն երկրաշարժ,
Այլ լոկ զեփիւռ մը մեղմ՝ որ քեզ կը շոյէ:

Ա.Դ.Ա.Մ

Ահե՛ղ տեսիլ:

ԱՐՈՒՍԵԱԿ

Պիտի հոգիդ լոկ կ'որսուի.
Բայց մի՛ վախնար, մարմինդ մումիայ կը մընայ,
Դպրոցական տղոց տեսիլ շահեկան,
Տըզեղադէմ, որուն վրայէն մաշած է
Գրութիւնը թէ ըստրուկ մըն էր, կամ իշխան:

(Աֆացի կը զարնէ մումիայի մը, որ խօսած ժամանակ՝ գահին առջեւ երեւցած էր, եւ որ դանդաղօրէն վար կը գլորի աստիճաններէն):

Ա.Դ.Ա.Մ (ոտփի ցատկելով)

Դըժոխային բանդաղուշանք, կ'որսուէ՛:
Ունայն ձգտում, խօլական է փառքի տենչ —
Դեռ կը լըսեմ. մէկուն փոխան՝ միլիոնե՛ր,
Պէտք է որ այս միլիոններուն ձեռք բերեմ
Իրաւունքներ՝ պետութեամբ մը ինքնիշխան: —
Ուրիշ ճամբայ չէ կարելի: Թող ջնջուին
Անհատներն ալ, ու թող համայնքը ապրի,
Որ մեծ ամբողջ մ'անհատներէն կը կերտէ:

Ե Ի Ա.

Եւ կը թողուս գիտ ալ, որ քու սէրըդ եմ:

ԱԴԱՄ

Այո՛, քեզ ալ, դահն, ամէն բան կը թողում:
Տա՛ր զիս զէպի նոր նըպատակ, Արուսեա՛կ:
Կորսնցուցի չառ ժամանակ թանկագին
Այս կեղծ ճամբէն: (Սուրը քաշած՝ կը մեկնի):

Ե Ի Ա

Տէ՛ր իմ, դարձիւ յուսարեկ՝
Սիրող ապաստան պիտի դռնէ սրտիս վրայ:

ԱԴԱՄ

Այո՛, այո՛, կը զգամ՝ դռնեմ պիտի քեզ
Նոր, մաքրւած կերպարանքով մը վըսեմ,
Եւ այն ատեն պիտի ստիպմամբ չըզըրկես,
Այլ զերբ ընկեր մը, հաճոյքի զգացումով: (Կ'ելի):

ԱՐՈՒՍԵԱԿ

Մի՛ շտապեր, մի՛, պիտի հասնիս դուն չուտով
Նըպատակիւ, յուսացածէդ ալ առաջ.
Ու տեսնելով որքան սին է՝ պիտի լաս,
Իսկ ես պիտի խնդամ: Երթա՛նք, օ՛ն, յառա՛ջ:

(Շար. 4)

Հունգար բնագրէն
քարգմանեց
Հ. Ա. Ֆ.

ԵՐԲ ԲԱՆԱՍՏԵՂԵՐ ՄԵՌԱԻ

Պարմանագեղ էր ան:
Գահավիժեցաւ սեպածեւ լերան մը կատարէն՝
Հորի մը մէջ անդնդախոր:
Գիւղին անդէրդն էր գտած անոր մարմինը ջախջախ.
Վերքերէն հոսած արիւնը կը ծծէին բռնեխներն արեւարբ.
Ճակտին վրայ խոր մագերուն մէջ կանանչ մողէգ մը կար
Արդէն յափրացած արիւնով ու լոյսով:
Աչքերը լայնածիր կը դիտէին հեռո՛ւն,
Ուր արծիւ մը կը սաւառներ կապոյտին մէջ:
Պարմանին կը նմանէր աստուածի մը աղեղնաւոր՝
Որ արագոտն այծեամի մը հետքերուն վրայ բարձրացած էր
Մինչեւ ծագը չարագոյժ լերան...

Զայն քաղեցին ցորենի դաշտին մէջ հեռատարած.
Եւ որովհետեւ կանանչ էր արեւն անոր կեանքին,
Եւ չէր ցամքած ալեւոյթի ցրտաշունչ քամիով
Արարչահիւքն անոր ոսկեշիք,
Հողաքումբին շուրջ կազմուեցաւ
Հրածածան լին մը բոցավառ կակաչներու.
Ու բոցահաւի սիրաջեր գոյգ մը քառեցաւ հոն երկար ատեն...
Որովհետեւ խաժ էին աչքերն անոր,
Երկնաշող շուշաններ ծաղկեցան ատո՛ք հասկերուն մէջ՝
Որոնք հովին տա՛ք համբոյրներուն տակ
Ծովամրմունջ ալիքներով մինչեւ հորիզոն կը հասնէին...

Ո՛վ տենչալի մահ՝ երիտասարդ քերթողի մը համար.
Մահ՝ որ հաւասար է աստուածներու բարեկամութեան,
Մահ՝ որ միայն արշալոյս է վարդակարմիր,
Եւ երբեք միջօրէ չ'ըլլար մարդոց յիշատակին մէջ.
Մահ՝ որ բոցն ունի բարձրակարգ խարոյկներուն
Եւ ոչ քէ՛ն ճրագներուն շողը մեղմափայլ...
Ո՛վ հազար անգամ ըզգալի մահ, որուն ես
Մինչեւ չափահաս տարիքս ունեցայ
Անսահման կարօտը ցաւատանջ...